ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 01 » .փետրվարի 2017 թ. N21-Ա

«ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N897-Ն և 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N1072-Ն որոշումների դրույթներով՝ «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Անտառտնտեսություն» մասնաճյուղերին ամրացված անտառների կենսունակության և արտադրողականության բարձրացման, սանիտարական վիճակի բարելավման, տնտեսապես արժեքավոր տնկարկների ձևավորման նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի 2017 թվականի հատումների ծավալներն ըստ հատման տեսակների՝ 10780 (տաս հազար յոթ հարյուր ութսուն) խորանարդ մետր, համաձայն հավելվածի:

2. «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մ.Մաթևոսյանին՝ սահմանված կարգով, անտառկառավարման պլաններին համապատասխան ապահովել «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում հատատեղերի հատկացման, բնափայտի մթերման և իրացման աշխատանքների իրականացումը:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Ա. Հարությունյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ի. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2017 թվականի փետրվարի 1-ի
N 21-Ա հրամանի

«ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ

N	«Անտառտնտեսություն» մասնաճյուղի անվանումը	Ընդամենը, խմ	Այդ թվում ըստ հատման տեսակների, խմ	
			Խնամքի	Սանիտարական
1	Արծվաբերդի	1050	1050	
2	Գուգարքի	500	350	150
3	Դսեղի	1920	600	1320
4	Եղեգնուտի	300		300
5	Լալվարի	1250	480	770
6	Կապանի	260	260	
7	Նոյեմբերյանի	1700	550	1150
8	Ջիլիզայի	1000	1000	
9	Սյունիքի	1870	1870	
10	Ստեփանավանի	610	410	200
11	Տաշիրի	320	320	
ԸՆԴԱՄԵՆԸ		10780	6890	3890